Doi: 10.56737/2953-7843-2025.08-55

ԼՈՒՍԻՆԵ ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՇՈՒՇԻԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ (ԿԱՆԱՉ ԺԱՄ) ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ[1]

Շուշի քաղաքի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին ցավոք 2020 թ. դարձավ Ադրբեջանի վարած մշակութային ցեղասպանության զոհը. պայթեցվեցին եկեղեցու զույգ գմբեթները, իսկ 2024 թ. փետրվարին այն ամբողջությամբ հողին հավասարեցվեց[2]։

177 տարվա պատմություն ունեցող այս հրաշք հոգեւոր-մշակութային կոթողը, որ գրեթե 2 դար իր կամարների ներքո միավորում էր հավատավոր ժողովրդին, դառնում դեպի երկինք վերառաքվող աղերսների մշտնջենական աղոթատուն, իսպառ վերացվեց։

Ադրբեջանի բռնազավթած Արցախի տարածքում սովորական է դարձել հայկական եկեղեցիների ու մշակութային այլ կոթողների հանդեպ վայրի եւ գազանաբարո վերաբերմունքը։

Հոդվածը արդիական է, քանի որ օրըստօրե նույն բախտին են արժանանում հայկական ինքնության ապացույցը հանդիսացող մեր քարեղեն նորանոր վկաները։

Որոշ հեղինակներ Շուշիի Ղարաբաղցոց թաղամասում գտնվող եկեղեցու կառուցման թվականը 1818-ն են համարում։ Այն գտնվում էր Ներքին թաղում եւ հայտնի էր Սուրբ Աստվածածին անվամբ։ Լեոն գրում է. «Ղարաբաղցիների թաղը գտնվում էր քաղաքի արեւելյան՝ համեմատաբար տափարակ եւ ցած տեղում, ուր այժմ թուրքերի մասն է,

---

[1] Ստացվել է՝ 4.04.2025, գրախոսվել է՝ 5.05.2025։ էլ. հասցե՝* yaramishyan1995@mail.ru:

[2] «Կանաչ ժամ»-ի վերջին քահանան. Բաքուն «նվիրաբերում է» եկեղեցին՝ հայկական հետքը կորցնելու համար. https://hy.armradio.am/archives/427533, *Կանաչ ժամը՝ հողին հավասարեցված. Շուշին մնաց առանց իր եկեղեցիներից մեկի.* https://www.azatutyun.am/a/32912876.html:

կոչվում էր Ներքին թաղ եւ ուներ իր առանձին եկեղեցին Սուրբ Աստվածածնի անունով եւ ուխտատեղին, որ այսօր էլ հայտնի է Շուշու հայությանը «Քամու խաչ» անունով։ 1840 թվականների սկզբներին Ներքին թաղի հայերը, թվով 56 ընտանիք, նեղվելով թուրքերի հարեւանությունից թողեցին իրենց եկեղեցին, Քամու խաչը եւ առանձին գերեզմանատունը եւ տեղափոխվեցին քաղաքի հյուսիսային կողմը, ուր բարձր բլուրի վրա շինեցին եկեղեցի։ Այդ նոր թաղը կոչվեց Վերին թաղ, իսկ նրա եկեղեցին այսօր էլ անվանվում է Նոր եկեղեցի (Թազա ժամ)»[3]։ Այդ պատճառով եկեղեցին հաճախակի հիշատակվել է Վերին թաղի եկեղեցի անվամբ։

1886 թ. աշխարհագրի համաձայն Շուշին բաղկացած էր 5779 ծխից, որից խաներ, մելիքներ, աղալարբեկեր 478, հոգեւորականներ 116, իսկ բուն հարկատուներ 5185 ծուխ։ Հայ լուսավորչականներ (արական եւ իգական) 15 160 հոգի. հոգեւորականներ երկու սեռից՝ 450 հոգի։ Հայերի եւ թուրքերի ընդհանուր թիվը 26 806 էր։ Քաղաքի արեւելյան կողմում ապրում էին թուրքերը 17 թաղով, արեւմտյան կողմում հայերը՝ 18 թաղով։ Ինչպես երեւում է աշխարհագրից հայերը մեծամասնություն էին կազմում։ Շուշիի թուրքերը մեծամասամբ գաղթել էին Թավրիզից, Ջուլֆայից եւ Շիրվանից, ինչը եւս մեկ անգամ փաստում է, որ նրանք այս տարածքում երբեք բնիկ չեն եղել։ Տեղաբնիկ հայերից բացի տարածքում հաստատվել են նաեւ Նախիջեւանից, Ագուլիսից, Ղազանչիից, Մեղրիից, Վարանդայից, Դիզակից, Խաչենից գաղթած հայություն։ Նրանք ունեին 4 եկեղեցի՝ Ագուլիաց (Նախիջեւանցւոց), Ղազանչեցւոց, Մեղրեցւոց, Վերին թաղի եւ մեկ կուսանոց՝ յանուն Հռիփսիմեանց[4]։

1890-ական թթ. տվյալներով Շուշիի բնակիչները գլխավորապես հայեր էին եւ շիա մահմեդական պարսիկներ։ Հայերը գաղթել էին Արցախի Շոշ եւ այլ հայկական գյուղերից։ Բնակչության թիվը՝ 33 252 երկու սեռից, 18 796 արական, 14 456 իգական։ Հայերի թիվն է՝ 11637 արական, 8947 իգական[5]։ Փաստորեն տարիների ընթացքում էական փոփոխություն

---

[3] Լեո, *Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838–1913, Թիֆլիս, 1913, էջ 63–64։*

[4] *ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 52։*

[5] Ե. Լալայան, *Երկեր, հտ. 2, Երեւան, 1988, էջ 29։*

չէր նկատվում, հայերի թվաքանակը էապես գերազանցում էր շիա մահմեդականներին։

Հովհաննես Մկրտիչ եկեղեցին հասարակության լայն շրջանակներում հայտի էր Կանաչ ժամ անվամբ, որն այդ ձեւով հիշատակվել է անգամ ժամանակի թերթերում[6]։ Շահեն Մկրտչյանը նշում է, որ այդ անվանումը կապված է, եկեղեցու գմբեթների կանաչ գույնով ներկված լինելու հետ[7]։

Եկեղեցին գտնվում էր սարահարթի բարձրադիր՝ արեւմտյան գոտում, որտեղից ակնահաճո երեւում էր քաղաքի ամբողջ համայնապատկերը։ Պատերի մեջ տեղադրված էր նախկին եկեղեցու արձանագրությունը։ Այն կառուցված էր արեւելք-արեւմուտք առանցքով, խաչաձեւ հատակագծով։ Կողային ավանդատները բեմի տակ իջեցնելու հետեւանքով, արտաքին՝ արեւելյան ճակատը կիսակլոր էր։ Եկեղեցին, զանգակատունը աչքի էին ընկնում ներքին ինքնատիպ հարդարանքով։ Այս հանգամանքը հուշարձանն առանձնացնում էր հայ ճարտարապետական համանման կառույցների շարքում։ Արեւմուտքից եկեղեցուն կցված էր հետագայում կառուցված գմբեթավոր զանգակատունը, որի մուտքի վերնամասում փորագրված էր. «Բաբայն Ստեփանէսն Յովհանէն յիշատակ հանգուցեալ եղբօր Մկրտչի 1847 թ.» արձանագրությունը։

Թեեւ զանգակատունը ներդաշնակ կերպով միաձուլված էր եկեղեցուն, այնուամենայնիվ, որմնամույթերով որոշ չափով առանձնացված էր նրանից։ Դրանով ավելի էր ընդգծվում դեպի աղոթասրահը տանող շքամուտքի հանդիսավորությունը։ Առհասարակ եկեղեցին որմնամույթերով (դա արդյունք է խաչաթեւերի) «բաժանված» էր երկու սրահի։ Առաջին, քառակուսուն մոտ հատակագծով սրահն ուներ երդիկավոր գլխատներին հատուկ գոցվող թաղ, իսկ երկրորդ՝ ուղղանկյուն սրահի շքեղ, սրբատաշ որմնամույթերի վրա բարձրանում էր շրջանաձեւ գմբեթը։ Եկեղեցու աղոթասրահն, ինչպես դա երեւում էր կառույցի արտաքին գոտկաքիվից եւ զանգակատան մուտքի աստիճաններից, շուրջ երկու մետր բարձր էր բակի մակարդակից։

---

[6] *«Փայլակ», Շուշի, 1915, հմր. 56, էջ 1։ «Մշակ», Ղարաբաղ. «Շուշու ողբերգությունը», Թիֆլիս, հմր. 13, 9 մայիսի, 1920։*

[7] *Շ. Մկրտչեան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները, Երեւան, 1985, էջ 226։*

Ուշագրավ էին գոցվող թաղերը, հայկական եկեղեցիների գմբեթների համար անսովոր որոշ տարրերը՝ անհամեմատ մեծ բացվածքները, բեմատակն իջեցված ավանդատները, արեւելյան կիսակլոր ճակատը[8]։

Ամբողջ կառույցը շարված էր սրբատաշ եւ կոպտատաշ կրաքարերի նրբաճաշակ զուգակցությամբ։ Սրբատաշ քարերով են կառուցվել առավել պատասխանատու հատվածները՝ քիվերը, որմերի անկյունային մասերը, որմնամույթերը եւ կրող կամարները, լուսամուտների եւ շքամուտքերի շրջանակները, գմբեթը եւ գմբեթավոր հատվածները, ինչպես նաեւ զանգակատան բոլորաշենն ամբողջությամբ։ Լուսավորությունն ապահովում էին խորանի՝ երեք, գմբեթի՝ չորս եւ եկեղեցու որմերին բացված հինգ լուսամուտները։ Արտաքին շքամուտքն արեւմուտքից բացվում էր զանգակատան մեջ, որտեղից էլ անցում էր կատարվում դեպի եկեղեցի։ Արեւմտյան երկար խաչաթեւը զույգ որմնամույթով բաժանված էր երկու հատվածի, որոնք ծածկված էին հատվող թաղերով։ Խաչաթեւերի կենտրոնն ամփոփված էր կեղծ գմբեթով, որի կենտրոնին հենված էր ավելի փոքր տրամագծով գմբեթը։ Եկեղեցու գմբեթն ամփոփված էր ոչ թե սուր վեղարով, այլ կորավուն ծածկով, իսկ զանգակատան բոլորաշենը՝ սուր վեղարով եւ ուներ առաջին հարկի համապատասխան քառանկյուն լուծում[9]։

Զանգակատան դռան աջ եւ ձախ կողմերում քարե սալիկների վրա գրված էր. կառուցին ս[ուր]բ Յովհաննէս Մկրտչի եկեղեցին շուշաքաղաքացի Պարոն Յովհաննէսն եւ (Ա. սալիկ) Բաբայն Ստեփանեան Յովնանենց ի յիշատակ հանգուցե[ա]լ եղբօր իւրենց Մկրտչին 1847 թվին *(Բ. սալիկ)[10]։*

Բ. Կարապետյանն անդրադառնալով եկեղեցուն նշել է. «Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին իր բարձր դիրքով, գլաքարե հետաքրքիր շարվածքով զանգակատան ու տաճարի գլանաձեւ բարձր գմբեթներով օրգանապես միահյուսվել է Նոր թաղի հետ ու առանձին շքեղություն է հաղորդում շրջապատին»[11]։

Հայաստանի ազգային արխիվում պահպանվել են Հովհաննես Մկրտիչ եկեղեցու կառուցման մասին հարուստ տեղեկություններ։ Եկեղեցու ծխե-

---

[8] Շ. Մկրտչյան, *նշ. աշխ., էջ 227–228։*

[9] Ր. Քորթոշյան, *Ընդհատվեց Շուշիի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 177-ամյա պատմությունը, Վարձք, հմր. 19, 2024, էջ 33։*

[10] *Տես* Г. Арутюнян, Шуши. Нововыявленные исторические надписи, Степанакерт, 2008, *էջ 252։*

[11] Բ. Կարապետյան, *Շուշի բերդաքաղաքը, Երեւան, 2000, էջ 176։*

րի մի մասը բնակություն էր հաստատել Շուշիում Վարարակն եւ Փահլուլ գյուղերից. «Ոմանք ի ժողովրդականաց Հայոց Սուրբ Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյն Վերին Թաղի Շուշի քաղաքի որք էին բնիկք Վարարակն եւ Փահլուլ գիւղօրէիցն»[12]։ Այստեղ ցանկանում ենք ներկայացնել հետեւյալ վավերագիրը.

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՂԴԱՍԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻՆ՝ ՅՈՒՆԱՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՇՈՒՇԻՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Թ. 45

3 յուլիսի 1847 թ.

Շուշի

Ի Լուսաւորչական Հայոց Սինօդն Էջմիածնի
Ի Վիճակաւոր Առաջնորդէն Ղարապաղու
Յայտարարութիւն

Հասարակութիւնն ի Հայոց ժողովրդականաց, բնակելոց յառաջ քան զայս ի Ներքին Թաղի Շուշի քաղաքի ի միջի մահմետականաց ունէին զառանձին հնացեալ եկեղեցի վասն Աստուածապաշտութեան յանուն Սուրբ Աստուածածնայ՝ կառուցեալ ի վաղ ժամանակաց հետէ, որոյ որմունք միայն էին քարեայ, բայց յարկ նորին փայտեայ։

Ի 1840 ամի ի պատճառ կրելոյ յիշեալ հասարակութեանն Հայոց ի կենցաղակցութենէ ընդ մահմետականաց՝ խառն ունելով ի միասին ընդ նոսա զբնակութիւն իւրեանց զբազմադիմի վիշտս ո՛չ միայն զանձնական, այլ որ առաւել է ի մասին աստուածապաշտութեան եւ դիմելոյ ընտանեաց նոցա յեկեղեցին վաղքաջ ընդ առաւօտն կամ ընդ երեկոյ ըստ սահմանեցելումն, ըստ իմում միջնորդութեան, հրամանաւ տեղական քաղաքական իշխանութեան, վերաբնակեցաւ հասարակութիւնն այն ի Ներքին Թաղէն ի Վերին Թաղն քաղաքիս ի հիւսիսոյ-արեւմտից կողման եւ այստեղի որոշեալ վասն բնակութեան նոցա գոլով հեռի ո՛չ միայն ի նախկին մնացեալ եկեղեցւոյ իւրեանց, յորում շարունակել այլեւս ըստ հնութեանն ժամերգութիւն էր երկիւղալի, այլ եւ ի միւս եկեղեցեաց քաղաքիս, տանի

---

[12] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4627, թ. 7։*

ցայսօր հասարակութիւնն այն զմեծ նեղութիւն ի դիմելն յայլ եկեղեցիս ի պատճառս, որպէս ասացաւ՝ հեռաւորութեանն։

Թէպէտ յիշեալ հասարակութիւնն հայոց յօրէ անտի վերաբնակելոյ իւրեանց ի Վերին Թաղն քաղաքիս դիտաւորեալ էին ամենայն յօժարութեամբ հոգւոյ կառուցանել զնոր եկեղեցի ի միջի այժմեան բնակարանաց իւրեանց, փոխանակ ամայացեալ եւ հնացեալ եկեղեցւոյն, որ ի Ներքին Թաղի, բայց չունելով զհարկաւորեալ գումար առ այն եւ գոլով յաղքատիկ դրութեան ցանկութիւն նոցա մնայր զայսվայր թերակատար։ Այժմ երկոքին եղբարք շուշաքաղաքացիք ի մերազնէից բարեպաշտ Յոհաննէս եւ Բապայ Յունանեանք տեղեակ գոլով զդիտաւորութենէ յիշատակեալ հասարակութեանն եւ գիտելով զո՛չ կարողութիւն նոցա, յանձն առին զկառուցումն նորոյ եկեղեցւոյ սեպհական իւրեանց ծախիւք համաձայն նախամտադրութեան հասարակութեանն այնորիկ, զորմէ եւ յայտնեցին ինձ։

Ուստի եւ ես թղթակցութեամբ ի 24 անցեալ Յունիսի № 41, պահանջեցի ի կոմանտիրէն Շուշւոյ ինժիներ կոմանտի զպլանն եւ զֆասատն կառուցանելի եկեղեցւոյն, զորս եւ ստացայ ի նմանէ ընդ գրութեան ի 25 նոյն Յունիսի № 528 ընդարձակութեամբ վասն Աստուածապաշտութեան ի նմին 180 արանց, որ բաւականէ՝ վասն յիշեալ հասարակութեանն։ Յայտ առնելով զայսմանէ ի գիտութիւն Լուսաւորչական Հայոց Սինօդիդ էջմիածնի եւ վկայելով յիմոյս կողմանէ զիսկական եւ զաննահանջելի կարօտութենէ հասարակութեանն Հայոց բնակելոց ի Վերին Թաղին քաղաքիս ի կառուցումն նորոյ եկեղեցւոյ ի միջի բնակարանաց իւրեանց յորոշեալ ի յարմարաւոր բարձրաւանդակ տեղւոջն փոխանակ ամայացեալ եւ արդէն հնացեալ եկեղեցւոյ իւրեանց, մնացելոյ ի Ներքին Թաղի, որ յօրէ վերաբնակութեան իւրեանց կայ կապեալ եւ որով ո՛չ առաւելու ցուցեալ ըստ ցուցակաց թիւ եկեղեցեաց քաղաքիս, խոնարհաբար խնդրել ի Սինօդէդ էջմիածնի պարտ անձին վարկանիմ, առնել զտնօրէնութիւն միջնորդելոյ ուստի հարկն է զլուծումն առ կառուցումն մտադրեալ եկեղեցւոյն յանուն Սուրբ Աստուածածնայ համեմատ ընդ սմին առաջի արարեալ պլանին *եւ* ֆասատին (նօտրգի՞r), *այլեւ մատուցանելով ընդ առաջարկութեանս ընդ այսմիկ զիսկական խնդրագործութիւն յիշատակեալ բարեպաշտ երկոցուց եղբարցն Յունանեանց, մատուցեալն ինձ ի 1 սոյն Յուլիսի ի տես Սինօդիդ, ո՛չ աւելորդ վարկանիմ*

խնդրել մի՛ անտես առնել ծանուցանել ինձ հրամանաւ զհետեւեալ տնօրէնութենէն ըստ այսմ առարկայի։

Վիճակաւոր Առաջնորդ Ղարապաղու՝ Մետրապօլիտ Բաղդասարայ[13]*։*

Ի 1 յուլիսի 1847 ամի

Նորին բարձր Սրբազնութեան

Վիճակաւոր Առաջնորդի եւ Մետրապօլտի Ղարապաղու Արքեպ[իսկոպո]սի եւ Ասպետի տ[եա]ռն Բաղտասարայ Հասան-Ջալալեանց

Ի Շուշւայ քաղաքացի երկոցունց
եղբարց Յոհաննիսի եւ Բապայի
Յունանեանց

Խնդիր

Լուեալ եմք մեք թէ Հասարակութիւնն Հայոց Վերին-Թաղի դիտաւորեալ գոլով կառուցանիլ ի հիմանէ զնոր եկեղեցի յանուն ս[ր]բ[ուհո]յ Ածածնի ի տեղւոջ անտ, ուր է այժմ ժամատուն ն[ո]ց[ա] փայտեայ եւ խարխալեալ, եւ առ այս վախճան ըստ թղթակցութեանն Ձերդ Բարձր սրբազնութեան արդէն ստացել է պլան եւ ֆասատն նոյն եկեղեցւոյ, բայց հասարակութիւնն այն, գտանիլով յաղքատիկ դրութեամբ եւ չունելով զգումար ինչ պատրաստի հարկաւորիլ առ այն շինութեանն մնայ թերակատար դիտաւորութեամբ ն[ո]ց[ա]։

Հարազատ եղբայրն մեր Մկրտիչն Յունանեանց, հանգուցեալն ի տէր յանցելում ամի, ունելով զծանօթութիւն յայսմ դիտաւորութենէ յիշեալ հասարակութեան, ի կենդանութեանն իւրում բանաւոր կտակաւ աւանդեալէ մեզ երկոցունց եղբարցս կառուցանել զայս եկեղեցի ի յիշատակ հոգւոյ նորա սեպհական ծախիւք մերովք։ Ուստի մեք երկոքին եղբարքն ստիպեալ ի քրիստոնէական ջերմեռանդութենէ առ կատարումն յիշեալ կտակի հանգուցեալ եղբօր մերոյ եւ ցանկանալով ծէսն արկանել ի յիշատակ հոգւոյ հանգուցեալ ի Տէր եղբօր մերոյ Մկրտչի Յունանեանց եւ այլոց Ննջեցելոց մերոց ի կառուցումն յիշեալ եկեղեցւոյ Ք[րիստոս]ի հասարա-

---

[13] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թթ. 1–2, բնագիր, ձեռագիր, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1649–1917 թթ.), հտ. Բ., Երեւան, 2014, էջ 29–31։*

կութեամբ Հայոց Վերին-Թաղի հոգալով տա՛մ հարկաւորիլ ծախսն առ այն ի սեպհականութենէ մերմէ, սկսեալ ի հիմանէ մինչ զկատարեալապ[է]ս աւարտումն այնորիկ առանց օգնականութեամբ ուրուք, եւ այսու ազերարկութեամբ(՞) յայտնելով զչերմաջերմ յոժարումի մեր ի կառուցումն յիշեալ եկեղեցւոյ գծագրեալ տարամբ(՞), խոնարհաբար խնդրիմք ի Ձերդ Բարձր-սրբազանութենէ առնիլ զպատշաճեալն տնօրէնութեամբ միջնորդելոյ զլուծումն ի շինութիւն նոյն եկեղեցւոյ յանուն ս[ուր]բ Ա[ստու]ծածնայ համեմատ պլանին եւ ֆասատին, ստացելոյ արդէն։
-Յօհաննէս Յունանեանց Բապայ Յունանիանց[14]

31 հուլիսի 1847 ամի,

ի ք. Շուշի

Ազգային արխիվում պահպանվել է նաեւ Կովկասի փոխարքայի ուղարկած գրությունը էջմիածնի սինոդին, որով նա տվել էր իր թույլատրությունը Շուշի քաղաքում կառուցելու Հովհաննես Մկրտիչ եկեղեցին.

Въ Эчмиадзинскій Армяно-Грегоріанскій Синодъ
14 января 1848 года
№ 115

О постройкѣ въ г. Шуши
Армянской церкви
По представленію Синода о желаніи жителей города Шуши Іоаннеса и Бабы Онановыхъ, соорудить на собственномъ иждивеніи, въ верхней части г. Шуши Армянскую церковь во имя Св. Богородицы, – я входилъ въ сношеніе съ Высокопреосвященнейшимъ Экзархомъ Грузіи, и, пополученіи нынѣ отъ него отзыва о неимѣніи со стороны Его Высокопреосвященства препятствія къ удовлетворенію желанія Армянъ Онановыхъ, – я разрѣшаю Эчмиадзинскій Синодъ одѣлать надлежащее со стороны онаго распоряженіе къ постройкѣ въ Шуши Армянской церкви.

Планъ и фасадъ церкви при семъ возвращаются.

Намѣстникъ Кавказскій,

---

[14] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թ. 3 եւ շրջ., բնագիր, ձեռագիր։*

Генералъ-Губернаторъ
Новороссійскій и Бессарабскій[15].

Ստորեւ բերվող՝ 1848 թ. փետրվարին Ղարաբաղի մետրոպոլիտ Բաղդասար արքեպիսկոպոսի գրությունից երեւում էր, որ Կովկասի փոխարքայի ուղարկած թույլատրությունը Շուշիում կառուցվող եկեղեցու մասին այդ պահին տակավին չի հասել Շուշի.

Ի Լուսաւորչական Հայոց Սինոդն էջմիածնի
Ի վիճակաւոր Առաջնորդէն Ղարաբաղու

Յայտարարութիւն

Ընդ յայտարարութեամբ իմում ի 3 յուլիսի անցեալ 1847 ամի № 45 առաջի արարեալ լուսաւորչական Հայոց սինոդիդ էջմիածնի զպլանն եւ զֆասատն նախատրամադրեալ կառուցանելի եկեղեցւոյն յանուն Ս[ր] բ[ուհուոյ] Ա[ստուա]ծածնի ի Շուշի քաղաքիս ծախուք բարեպաշտօն հայազգի երկուց եղբարց Յունանեանց խնդրեալ էի միջնորդ լինիլ առ թոյլատրութիւն կառուցման այնորիկ. առ որ ստացեալ զհրաման սինոդիդ ի 12 սեպտեմբերի № 1549, յայտնեցի նոցա զարարեալ տնօրէնութեանն ըստ այնմ կողմանէ սինոդիդ յանձնարարութենէ հրամայեալս շնորհակալութեամբ։

Զստանալով տակաւին զհարկաւորեալ լուծումն առ ձեռնարկութիւն շինութեան յիշեալ եկեղեցւոյն, նշանակեալ Յունանեանքն ի պատճառս մերձենալոյ գարնանային ժամանակի, խնդրեցին կրկնել զմիջնորդութեամբ իմ ի սինոդդ յորմէ ստիպեալ եւ ես առ ի վառ պահիլ ի սիրտ նոցա Ա[ստուած]ահաճոյ ջերմեռանդութիւն խնդրիմ խոնարհաբար ի սինոդէդ էջմիածնի մի՛ անտես առնել ծանօթս զիս հրամանաւ, թէ արդեօ՞ք կայացեալ է արդեն խնդիր ընդ ձեռն Տ. Փոխարքային Կովկասու զԲարձրագոյն լուծումն առ այն, թէ՞ ոչ տակաւին։

Վիճակաւոր Առաջնորդ
Ղարապաղու-Միտրոպոլիտ Բաղդ[ա]ս[ա]ր
ի 12 փետրուարի 1848 ամի
ի ք. Շուշի[16]

---

[15] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թ. 8 եւ շրջ., բնագիր, ձեռագիր։
[16] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թ. 8 եւ շրջ., բնագիր, ձեռագիր։

Արխիվային նյութերը փաստում եմ, որ եկեղեցու շինարարությունը պիտի սկսած լինի 1848 թ. հունվարին, բայց եկեղեցու քարեղեն արձանագրության մեջ հիմնադրման թիվը 1847 է, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ եկեղեցու կառուցման հիմքերը դրվել են 1847 թ. վերջերին։ 1851 թ. Շուշիի Վերին Թաղի եկեղեցու ծխերի քանակը ամենաքիչն էր՝ 80 տուն։ Ամենամեծը Ագուլեցւոց եկեղեցու ծխերի քանակն էր՝ 458, Ղազանչեցւոց եկեղեցունը՝ 378, Մեղրեցւոցը՝ 188։ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգեւորականներն էին՝ Մովսէս քահանա Շահնազարեանցը, որ իր զառամության եւ ցավերի պատճառով անընդունակ էր ծառայելու եկեղեցուն, Դաւիթ Յոհաննիսեանը՝ անընդունակ էր ցավերի պատճառով, Խաչատուր քահանայ Ղալայ-Բեկեանցը, Յակոբ քահանայ Տէր-Գրիգորեանը, Գէորգ Տէր-Խաչատրեանցը, դպիր Յօհաննէս Մախմուրեանցը, լուսարար Աստուածատուր Տէր-Աստուածատրեանցը, Բաղտասար քահանայ Բատամեանցը[17]*։*

Հետաքրքրական է, որ Թ. դարի մամուլի էջերում Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հիմնադրման թվականը եւս համարվում է 1847 թ։ «Քաղաքիս Վերին Թաղի եկեղեցին, որ 45 տարվա եկեղեցի է, համեմատելով քաղաքի մյուս եկեղեցիների հետ գտնվում է բավականին աղքատ դրության մեջ, որովհետեւ ժողովրդի մեծ մասը չքավոր արհեստավորներ են»[18]*։ Այնուհետեւ նույն տեղում ընթերցում ենք, որ «վերջերս շնորհիւ մի քանի իշխանների եւ գործունեայ հոգեւորականի սկսել է պայծառ կերպարանք ստանալ։ Պ. Բ. Աղասարեանցը այդ եկեղեցուն նուիրեց նորերս վախճանուած Աբիհայաթ խանում Աղասարեանցի դեռ իւր կենդանութեան օրոք պատրաստել տուած թանկագին շուրջառը 120 մանէթ արժողութեամբ»։*

Ղարաբաղցոց Ներքին Թաղի փայտաշեն եկեղեցու մասին առաջին հիշատակությունը կատարել է Մեսրոպ Թաղիադյանը, երբ Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա. Զորագեղցու հետ այցելել է Շուշի[19]*։ Եկեղեցու մասին մանրամասն տեղեկություններ է հայտնում Մակար Բարխուդարյանը. «Եկեղեցի Նոր-Թաղի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ. խաչաձեւ, առանց սիւների, թաղակապ. սրբատաշ քարով, որ ունի երկու դուռն հիւսիսային եւ արեւմտեան կողմերից, մի զանգատուն եւ մի գմբէթ խաչաձեւի վերայ,*

---

[17] *ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2199, թ. 13 եւ շրջ., բնագիր, ձեռագիր։*

[18] *«Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան», գիրք Թ., «Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը», (1813–1933), կազմեց Ս. Բէհբուդեանը, Երեւան, 2001, էջ 202–203։*

[19] *«Նոր դար», Թիֆլիս, 1892, հմր. 10, 22 յունուարի, էջ 2։*

երկարութիւն (զանգատան հետ միասին)՝ 27 մետր 70 սանթիմ, լայնութիւն՝ 10 մետր 90 սանթիմ։ Տաճարումս կայ մի փոքրիկ գրչագիր աւետարան գրուած մագաղաթի վերայ, որ չունի պատկերներ, բայց ունի գեղեցիկ զիր. մանր եւ անճաշակ նկարեր. նաեւ ծաղիկներ. Յիշատակարանից. «Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի յերկրիս մերում Կեղբուայձոյ ի գեօղն, որ կուչի Կից. ի դրանէ Սուրբ Ստեփաննոսի ի հայրապետութեան Սուրբ էջմիածնայ տէր Եղիազարու ի հովուապետութեան Ըստաթէի տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի եւ սորին սպասաւոր տէր Զաքարիա վարդապետի, ամէն։ Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս թւ. ՌՃԼԳ. յուն. Ժ. աւարտ. սորա ի թագաւորութիւնն Պարսից Շահ Սուլմանի (Սուլեյմանի) եւ դիտող յերկրիս մերում զԲաքդար Սուլդանն, որում չարչարանք կորուսուց յերկիրս, որ (որում) ետ Աստուած զերեք պատուհասն Հաճի Ալի խան սարդար (փոխարքայ) եղեւ, եկեալ ԽԲ. Ռ. հեծելով բնակեցաւ ի քաղաքն Կանջայ եւ բազում աւերութիւն արար ի Հայոց աշխարհիս եւ յետ նորա զմարախն եւ զերաշտութիւնն եւ բազումք կորեան վասն անհնչութեան իւրեանց.... դարձեալ յիշեցէք զՇնաթաղու քահանայ զտէր Առաքելն եւ զտէր Գրիգորն, որ եղեւ պատճառ սորին եւ տանուտէր Շապանն...»։

Շատ հետոյ գրած է ուրիշ ոմն. «Կրկին յիշատակէ սուրբ աւետարանս Անդամէջցի Ծատուրի որդի Սիրականին, որ գերի էր անկեալ (աւետարանս) ի ձեռս այլազգեաց, վերոյ (գրեալ) Սիրականն ազատեաց եւ յետ (ետ) յիշատակ Անդամիջոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի... գրեցաւ ի թւն. ՌՄԽԵ. (1796) սեպ. ԺԵ.»։

Հուսկ յետոյ գրուած է. «Յիշատակ ետու սուրբ աւետարանս Շուշ[ու] այ քաղաքացի Աւագ Դանիէլեան Ղազարեանցս Սրբոյն Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյն յիշատակ հոգւոց մերոց, որոյ յիշեցէ՛ք զպատճառն սորա, զի այլոց կալայ գնեցի յայլմէ)... թուական Քրիստոսի հազար ութ հարիւր ութսուն երեք ամի Ժ. մարտի»։ Եկեղեցիս ունի չորս քահանայ»[20]։

1887 թ. «Նոր Դար»[21] թերթում ընթերցում ենք, որ Սուրբ Հովհաննես եկեղեցին ամենաաղքատն է Շուշիի չորս եկեղեցիների մեջ, թե՛ յուր փոքրաթիվ եւ աղքատ ժողովրդով եւ թե՛ ելումուտով, սակայն այս եկեղեցին

---

[20] Մ. Թաղիադեան, *Ճանապարհորդութիւն Մեսրովբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. Սարկաւագի Սրբոյ էջմիածնի ի Հայս, հտ. առաջին, Կալկաթա, 1847, էջ 286։*

[21] *«Նոր դար», Թիֆլիս, 1887, հմր. 64, 30 ապրիլի, էջ 2։*

յուր փոքրությամբ օրինակ պիտի ծառայի մյուս եկեղեցիների համար՝ ելումտից հաշիվ ներկայացնելով։

1889 թ. Շուշու Սուրբ Հովհաննես եկեղեցու վանահայրն էր Գրիգոր քահանա Տեր-Ղազարյանցը։ Եկեղեցում նրա գործունեությունն սկսվել էր դեռևս 1857 թ։ 1889 թ. Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոնին՝ շաբաթ երեկոյան, ժամերգությունից հետո նա քարոզ կարդաց, ինչից հետո մի խումբ երիտասարդներ, որոնք վաղուց էին մտադրվել վարձատրելու տեր հորը՝ մի ոսկեջրած արծաթյա շաքարաման եւ երկու արծաթյա փոքրիկ բաժակներ նվիրեցին նրան։ Շաքարամանի վրա գրված էր. «Ընծայւում է հայ երիտասարդներից հայր տէր Գրիգորին՝ գնահատելով նրա 32 տարուայ արժանաւորութիւնը»[22]։

Դեռևս 1860-ական թվականների սկզբներին մտադրություն է եղել եկեղեցուն կից դպրոց բացելու, բայց թե երբ է այն բացվել հայտնի չէ։ Հիշատակվում է, որ 1884 թ. Շուշու Վերին Թաղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից գործել է ծխական դպրոց, որը սակայն փակվել է 1885 թ. կառավարության կողմից։ Այն նորեն հիշատակվում է 1906 թ. վերաբացված դպրոցների ցուցակներում[23]։

Վերին Թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու բակում էր գործում Թադեւոսյան երկսեռ միադասյա դպրոցը։ Այն հիմնվել էր 1895 թ. բաքուաբնակ շուշեցի Իսահակ Մաթեւոսի Թադեւոսյանցի մեկենասությամբ։ 1896 թ. ցարական կառավարության հրամանով մյուս դպրոցների հետ միասին փակվել է նաեւ այս դպրոցը եւ վերաբացվել միայն 1905 թ.՝ ազգային դպրոցները վերաբացելու թույլտվություն ստանալուց հետո։ 1907/1908 թթ. ուսումնական տարում առաջին պատրաստականում սովորում էր 19 աղջիկ, 40 տղա, երկրորդ պատրաստականում 14 աղջիկ եւ 20 տղա, ընդհանուր 93 աշակերտ[24]։

1908/09 ուսումնական տարում դպրոցը բաղկացած էր երկու բաժանմունքից, որտեղ սովորում էին 101 աշակերտներ՝ 70 տղա եւ 31 աղջիկ։ Դպրոցում դասավանդում էր երեք ուսուցիչ՝ Արամ Տեր-Իսրայելյանը, Հակոբ Խանլարյանը եւ Մուշեղ քահանա Վարդապետյանը։ Հաջորդ ուսումնական տարում դպրոցն ուներ երեք բաժանմունք 112 աշակերտներով՝ 68 տղա

---

[22] *«Նոր դար», Թիֆլիս, 1889, հմր. 47, 29 մարտի, էջ 2։*

[23] Ս. ԽՈՒԴՈՅԱՆ, *Արեւելահայ դպրոցները 1830–1920 թվականներին, Երեւան, 1987, էջ 380–381։*

[24] *«Մշակ», Թիֆլիս, 1907, հմր. 57, 16 մարտի, էջ 3։*

եւ 44 աղջիկ։ Ուսուցիչներն էին՝ Ասլան Միրզայանը (նաեւ՝ Աբասյանց) եւ Արամ Տեր-Իսրայելյանը[25]։ 1911 թ. Թադեւոսյան դպրոցում սովորում էր 135 աշակերտ[26]։ Այստեղ սովորում էին քաղաքի ամենաչքավոր դասակարգի երեխաները։ Ուսումը դպրոցում ձրի էր, երեխաները ձրիաբար ստանում էին նաեւ դպրոցական պարագաներ, ծայրահեղ չքավորները՝ հագուստ։

Թադեւոսյան դպրոցը պահվում էր բաքուաբնակ շուշեցի Իսահակ Թադեւոսյանի կտակած 30 000 ռուբլի գումարի տոկոսներով, որը տարեկան կազմում էր 1600 ռուբլի, եւ որով հոգում էին դպրոցի բոլոր ծախսերը։

Արխիվում պահպանվում է Մատթեոս Բ. կաթողիկոսի կոնդակը Իսահակ Մաթեւոսյան Թադեւոսյանցին Շուշիի Ս. Հովհաննես եկեղեցուն նվիրաբերություն անելու կապակցությամբ՝ գրված 1910 թ. հունվարի 27-ին.

ՄԱՏԹԵՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱՂՆՈՒԱՇՈՒՔ Պ. ԻՍԱՀԱԿԱՅ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ԹԱԴԷՈՍԵԱՆՑ ՇՈՒՇԻ
ՔԱՂԱՔԱՅԻՈՅ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄՕՐՍ ԼՈՒՍՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ԲԱՋՄԱՍՅԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՆԴԵՐՁ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

Ի յայտարարութենէ սինօդի սրբոյ էջմիածնի ի 22 ամսեանս յունուարի թ. 114, հոգեզուարճ սրտիւ եւ մխիթարութեամբ հոգւոյ իրազեկ եղաք, եթէ Գերազնուութիւն Ձեր շարժեալ ի բարեպաշտական եւ ի ջերմեռանդն զգացմանց եւ ի բարենախանձ ցանկութեանց՝ սիրայօժար կամօք նուիրաբերեալ է ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցւոյ Հայոց Շուշի քաղաքի զերեսուն հազար ռուբլի գումար, որ պարտի՝ իբրեւ զանձեռնմխելի դրամագլուխ, յանձն լինել դրամատան, իսկ տոկոսիք նորին ծախեսցինի վերայ «Թադէոսեան» եկեղեցական-ծխական դպրոցի, որ եւ ցարդ պահպանեալ լինի ծախիւք եւ ջանիւք Ձերովք։ Որդեակդ հոգեւոր, զի՞նչ առաւել վսեմ եւ բարձր քան զուսումն եւ զգիտութիւն մատաղերամ մանկանց ս. Եկեղեցւոյս, որոյ իբրեւ զհաւատարիմ եւ զհարազատ զաւակ, արկանէք զլումայն Ձեր յանկապտելի գանձանակ՝ նուիրաբերութեամբ 30000 ռուբլեաց յօգուտ յառաջադիմութեան մանկանց փոքունց։

---

[25] Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Շուշիի օրիորդաց դպրոցները եւ հայ բարերարները. Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երեւան, 2015, էջ 107–108։*

[26] *«Ղարաբաղ», Շուշի, 1911, հմր. 2, էջ 4։*

Ապաքէն քաջ ըմբռնեալ Ձեր զկարեւորութիւն ուսման եւ կրթութեան՝ բարեգործութեամբ Ձերով կանգնէք զկոթող անեղծ, զփարոս անշէջ եւ զյիշատակ անմոռաց եւ անանց դարուց ի դարս յէջս ազգային պատմութեան, եւ ապագայ սերունդն դպրոցիդ պատկառանօք յորջորջեսցի զպանծալի անուն Ձեր։ Ուրախալի է յոյժ եւ մխիթարական սրտի Հայրապետի լրութեան Ազգիս, յորժամ տեսանէ զառաքինի եւ զբարի գործս հոգեւոր որդւոց իւրոց, յորոց զմին յանձին Գերազնւութեան Ձեր տեսանէ, զի դուք կրթասէր ընթացիւք Ձերովք օրինակ բարի հանդիսանայք այլոց մեծատանց ի մերազնէից։

Արդ ամենայն ջատագովութեան արժանի համարելով զսրտաբուղխ նուիրաբերութիւն Ձեր յօգուտ յարկի կրթութեանդ, այսու Հայրապետական կոնդակաւ Մերով յայտնեմք բարեպաշտ Գերազնւութեանդ զլիաշուրթն գոհունակութիւն Մեր հանդերձ Հայրականն օրհնութեամբ։ Մաղթեմք ի Տեառնէ ի հաճոյս Իւր ընդունել զնուիրաբերութիւնդ, պարգեւելով Ձեզ եւ համայն Գերդաստանի զքաջառողջութիւն, զբարեբաստութիւն եւ զկեանս ընդ յամայր ամս։ Այլեւ աղօթեմք, զի երկնաւոր Հայրն զհոգի բարեյիշատակ ծնօղաց Ձերոց դասեսցէ ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան Իւրոյ, ննջեցեալն յուսով յաւիտենական երջանկաւետ կենաց։

Ո՛ղջ լերուք, պահպանեալ ի խնամս ս. Հոգւոյ, զորացեալ ի Տէր եւ օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ[27]

Մայր գումարը պահվում էր բանկում՝ դպրոցի անունով, տոկոսների մնացորդը կցվում էր մայր գումարին։ Դպրոցն ուներ երկու սենյակից եւ պատշգամբից բաղկացած լավ կահավորված սեփական շինություն, որը կառուցվել էր բարերար Իսահակ Թադեւոսյանի միջոցներով։ Համաձայն Ղարաբաղի Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչ Ստեփան Տեր-Ավետիքյանի գրության՝ Թադեւոսյան դպրոցը ամբողջ թեմում նյութապես բոլորովին եւ մշտապես ապահովված միակ եկեղեցական-ծխական դպրոցն էր։ Բացի դպրոցը նյութապես ապահովելուց՝ մեծ բարերարին մտահոգում էին նաեւ դպրոցական ծրագրի ու, դրա հետ

[27] *«Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան», գիրք Թ., «Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը», (1813–1933), կազմեց Ս. Բէհբուդեանը, Երեւան, 2001, էջ 480–481։*

կապված, սաների հետագայում ավելի բարձրակարգ կրթություն ստանալու հարցերը։ Այդ մասին է վկայում Ի. Թադեւոսյանցի Ս. Էջմիածնի Հայոց լուսավորչական սինոդին ուղղված խնդրագիրը. «Շուշի քաղաքի Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցուն կից իմ անունով, այն է «Թադէոսեան» ծխական երկսեռ դպրոցի դասաւանդութիւնը կատարւում է գիւղական ծխական դպրոցների ծրագրով, որին ղեկավարում է թեմական տեսուչը։ Այդ ծրագիրը բնաւ չէ համապատասխանում թէմական դպրանոցների ծրագրին, որից առաջանում է այն անյարմարութիւնը, որ իմ դպրոցն աւարտող սաները հեշտութեամբ չեն կարողանում մտնել Ղարաբաղի թեմական դպրանոցը, ուր աշակերտների ընդունելութիւնը կատարւում է կօնկուրս քննութիւնով. այդպիսով յիշեալ սաները, որոնք ամենաաղքատ եւ չքաւոր դասակարգից են, մնում են թերուս եւ զուրկ գէթ միջնակարգ կրթութիւնից։ Յայտնելով վերոյիշեալի մասին Ս. Սինօդիդ, ամենախոնարհաբար խնդրում եմ՝ կարգադրել յիշեալ իմ անունով ծխական դպրոցի ուսումնական մասի ղեկավարութիւնը յանձնել Շուշուայ թեմական դպրանոցի տեսչութեանը, որտեղ դասատուութիւնը կաւանդուի թեմական դպրանոցի ծրագրով նորա տեսչի հայեցողութեամբ, որպէս զի աւարտող սաները հեշտութիւն ունենան մտնել դպրանոցը միջնակարգ ուսում ստանալու իմ որդեկրութեամբ, այդ մասին եւ յայտնել ինձ անդ հարկ եղած նիւթական օգնութիւնս հասցնելու» [28]։

Իսահակ Թադեւոսյանի սկսած բարենպատակ գործունեությունը նրա մահից հետո շարունակեցին ժառանգները, որոնք 17 հազար ռուբլի նվիրաբերեցին Շուշիի դպրոցներին, թուրքական մզկիթին, հայ հոգեւորականությանը, ջուլհականոցին, որբանոցին, Կովկասյան Հայոց Բարեգործական Կուլտուրական ընկերությանը եւ 5000 ռուբլի Հայոց կաթողիկոսին՝ աջահամբույր[29]։

Հետագայում եւս Իսահակ Թադեւոսյանի ժառանգները չդադարեցին դպրոցին դրամական օգնություն ցուցաբերել։

1916 թ. սեպտեմբերի 25-ին Իսահակ Թադեւոսյանի մահվան 6-րդ տարելիցին նվիրված՝ Վերին Թաղի սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում հոգեհանգստի արարողություն էր կազմակերպվել, որին ներկա էին

---

[28] Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Շուշիի օրիորդաց դպրոցները եւ հայ բարերարները. Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երեւան, 2015, էջ 107–108։*

[29] *«Տարազ», Թիֆլիս, 1910, հմր. 10, էջ 101։*

«Թադեւոսյան» ծխական դպրոցի աշակերտ-աշակերտուհիներն իրենց ուսուցիչներով։ Պատարագից հետո Իսահակ Թադեւոսյանի ժառանգները դպրոցի չքավոր աշակերտներին նվիրաբերեցին 300 ռուբլի[30]։

Հովհաննես Մկրտիչ եկեղեցին տուժեց 1920 թ. հայերի կոտորածների ժամանակ։ Անդրադառնալով Շուշիի 1920 թ. կոտորածներին Մշակ թերթը գրում է. «Մի քանի ժամուայ ընթացքում քաղաքը այրւում է կազարմի մօտ, Կանաչ ժամի մօտ եւ ներքեւի հանգստարանում։ Այդ երկու ժամուայ մէջ հրդեհը Կանաչ ժամի մօտից հասնում է մինչեւ ուպրավան։ Դեռ մենք քաղաքումն էինք, որ այրւում էր Մայկօ բաջոնց (Մովսէս Եուզբաշեանի), Ստեփան խնամոց, Աթաբեգեանների այդ բոլոր թաղը։ Սրբազանին եւ քահանային թուրքերը գլխատում են եւ տունը իսկոյն այրում։ Աթաբեգեանների ամբողջ ընտանիքին, Խալոնց Ախլենքի բոլոր ընտանիքներին թիքա-թիքա (պատառ-պատառ) են անում եւ տան մէջ այրում»[31]։

Խորհրդային շրջանում Կանաչ ժամ եկեղեցին վերածվել էր հանքային ջրերի ըմպելասրահի։ Սակայն հուշարձանի հարմարեցումը բանիմացորեն չի կատարվել, կամ իրականացվել է հատուկ նպատակով, հարդյունս որի խախտվել, քողարկվել են եկեղեցու ներսի կողմի առանձին հատվածներ։ Բեմի վրա տեղադրված երկաթե մեծ ջրավազանը, որը քողարկված էր բոլորովին անհաջող բնանկարով, լրիվ փակել, դահլիճից կտրել էր բեմը։ Արեւմտյան զանգակատան հիմնական մուտքի աստիճանները քանդել եւ նրանց փոխարեն նոր (հուշարձանին անհամապատասխան) աստիճաններ էին կառուցել՝ հյուսիսային ճակատի մակերեսով, որի պատճառով քանդվել է կենտրոնական լուսամուտի գոգատակի պատը։ Ջրամբարից հաճախակի թափվող հանքային ջրերը, ողողում են խորանները, այնտեղից պատը քայքայելով հոսում դեպի բակը[32]։

1992 թվականին, Շուշիի ազատագրումից հետո, Հովհաննես Մկրտիչ եկեղեցին անմիջապես մաքրվել եւ վերաբացվել էր եւ 1995 թ. փետրվարի 23-ին Վարդանանց տոնին «Կանաչ ժամն» արդեն բաց էր հավատացյալների համար։ Մինչ Ղազանչեցւոց սուրբ Աստվածածնի ամբողջական

---

[30] *«Փայլակ», Շուշի, 1916, հմր. 75, 29 սեպտեմբերի, էջ 2։*

[31] *«Մշակ», Ղարաբաղ. Շուշու ողբերգությունը, Թիֆլիս, հմր. 13, 9 մայիսի, 1920, հմմտ.* https://armenianarchitecture.org/public/am/monuments/5815:

[32] Շ. Մկրտչյան, *նշ. աշխ., 228։*

վերանորոգումը մարդիկ 4–5 տարի այցելում էին միայն «Կանաչ ժամ», որովհետեւ պատարագներն այնտեղ էին մատուցվում, եւ մարդկանց հոսքը չէր նվազում[33]*։*

Եկեղեցին վերանորոգվել եւ վերաօծվել է 1999 թ։ Վերաշինեցաւ Ս(ուր)բ Հովհաննես Մկրտիչ եկեղեցիս բարերարութեամբ | Անդրիւ Շահինեանի եւ Մանուէլ Բաղէեանի յառաջնորդութեան | տ(էր) Պարգեւի արքեպիսկոպոսի | եւ ի տեղապահութեան տէր Ներսեսիարքեպիսկոպոսի, ի թուին Քրիստոսի ՌՋՂԹ., 1999:

1995–2005 թթ. եկեղեցու հոգեւոր հովիվն էր Կորյուն Կարապետյանը[34]*։*

1995 թ. մայիսին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա. այցելություն կատարեց դեպի Արցախ։ «Մանուկների թոթովախօս լեզվով հնչած «Հրաշափառ», «Ուրա՜խ լեր սուրբ եկեղեցի» շարականների ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը մուտք գործեց Կանաչ ժամ, որտեղ առաջնորդ սրբազանը բարի գալուստ մաղթեց Վեհափառին՝ ասելով, որ արցախցին Հայոց հայրապետին է նվիրում աշխարհի ամենամեծ եւ ամենազորավոր զենքը՝ հայի աղոթքը։ «Կանաչ ժամի վերանորոգված սրբազան խորանի առջեւից Վեհափառը յորդորեց իր ժողովրդին ապրե՛լ որպէս եկեղեցի, ապրել աղօթքով եւ Աստուծոյ վերանորոգող ու վերափոխող սիրով»[35]*։*

2009 թ. եկեղեցում սկսվել էին շինարարական աշխատանքներ, որոնք ավարտին են հասցվել 2015 թ.։ Այն հիմնովին վերանորոգվել էր, բարեզարդվել, տեղադրվել էին կանթեղներ, սրբապատկերներ։ 2015 թ. հուլիսի 4-ին կատարվել էր զանգակատան 2 նոր զանգերի տեղադրման եւ օծման արարողությունը։ «Հովհաննես Մկրտիչ»-ը համալրվել էր հովվատնով՝ իր օժանդակ կառույցների հետ մեկտեղ (գրատուն, ժողովատեղի)։

1995 թ. սկսած այստեղ գործում էր «Հոգեմտավոր մարմնակրթարան» մանկապատանեկան խմբակը, որի հիմնական նպատակն էր քրիստո-

---

[33] *«Կանաչ ժամ»-ի վերջին քահանան. Բաքուն «նվիրաբերում է» եկեղեցին՝ հայկական հետքը կորցնելու համա՞ր.* https://hy.armradio.am/archives/427533.

[34] Ր. Քորթոշյան, *Ընդհատվեց Շուշիի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու 177-ամյա պատմությունը, էջ 40։*

[35] *Վեհափառ հայրապետի հովվապետական այցելությունը Արցախի թեմ, «Էջմիածին», 1995 թ., Երեւան, էջ 96։*

նեական դաստիարակությունը։ 2006 թ. եկեղեցին ուներ համայնք բաղկացած 40–50 հոգուց՝ Երիտասարդաց միություն, Տիկնանց միություն, դպրաց՝ արական եւ իգական դասեր։ Այս ամենի մեջ իր կարեւոր դերակատարությունն է ունեցել 2006–2020 թթ. եկեղեցու հոգեւոր հովիվ՝ տեր Մեսրոպ քահանա Մկրտչյանը։ Եկեղեցին հայտնի էր նաեւ հրաշքներով, բազմիցս ծառայությունների ժամանակ եղել են հայտնություններ Հովհաննես Մկրտչի եւ Աստվածամոր հայտնությամբ, ինչով էլ երեւում էր եկեղեցու կենդանի լինելը[36]*։*

Եկեղեցում վերջին անգամ Սուրբ պատարագ էր մատուցվել 2020 թ. սեպտեմբերի 27–ից մեկ շաբաթ անց։ Տեր Հայրը Սուրբ Հովհաննես եկեղեցու դռները չի փակել Շուշիից դուրս գալուց, դուրս էր եկել դատարկաձեռն՝ քահանայական պայուսակով, քահանայական հագուստով՝ աչքերը հառած սուրբ եւ ամենազոր խաչին։ Նոյեմբերի 9–ի պայմանագրից երեք օր անց պայթեցվել էին Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու երկու գմբեթները։ Տարածքում ինչքան խաչ կա՝ հանել էին, երիցտունը դարձրել ճաշարան[37]*։*

2024 թվականի փետրվարին արբանյակային լուսանկարներից պարզ էր դարձել, որ Ադրբեջանը հիմնահատակ ոչնչացրել է Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին[38]*։*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Շուշի, Կանաչ ժամ, Ներքին թաղ, Հունանյան եղբայրներ, Թադեւոսյան դպրոց, Իսահակ Թադեւոսյան, գմբեթ, եկեղեցի, ծուխ, վերանորոգում

РЕЗЮМЕ

Настоящее исследование представляет собой всесторонний историко-архитектурный анализ церкви Святого Иоанна Крестителя (Сурб Ованнес Мкртич), более известной как Канач Жам («Зелёная часовня»), расположенной в армян-

---

[36] *ՏԵՍ ՇՈՒՇԻ/Կանաչ ժամ/ 07.11.2016,* https://www.youtube.com/watch?v=XAJPsmwJ8as, *Շուշի (ԼՂՀ Շուշիի շրջանի վարչակազմի պաշտոնաթերթ), Շուշի, հմր. 13 (412), հուլիս, 2015, էջ 2–3։*

[37] *ՏԵՍ* https://hy.armradio.am/archives/427533:

[38] *Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (Կանաչ ժամ) ավերված է.* https://geghard-saf.am/281/surb-hovhannes-kanachjam/:

ском городе Шуши. Возведённая в 1847–1848 гг. на средства и по инициативе братьев Унанян, церковь на протяжении почти двух столетий являлась выдающимся духовным и культурным символом Арцаха.

На основе архивных источников, хранящихся в Национальном архиве Армении и в Эчмиадзинском Синоде, автор раскрывает обстоятельства строительства храма, его архитектурные особенности и значение в религиозной и общественной жизни города. Особое внимание уделено деятельности приходской школы Тадеосяна, основанной благотворителем Исаком Тадеосяном, сыгравшей важную роль в деле просвещения и национально-христианского воспитания в конце XIX – начале XX века.

Дальнейшая судьба храма прослеживается от его осквернения и искажения в советский период до восстановления и повторного освящения после освобождения Шуши в 1992 году. Завершается повествование трагическим фактом полного уничтожения церкви Азербайджаном в феврале 2024 года – как очередным актом систематического уничтожения армянского культурного наследия в Арцахе.

Таким образом, работа не только воссоздаёт облик исчезнувшего памятника армянского церковного зодчества, но и свидетельствует о неугасимой борьбе за сохранение духовной и культурной памяти армянского народа.

SUMMARY

This study offers a comprehensive historical and architectural examination of the Church of Saint John the Baptist (Surb Hovhannes Mkrtich), widely known as Kanach Zham (“Green Chapel”) in the Armenian city of Shushi. Built in 1847–1848 with funds and on the initiative of the Hunanyan brothers, the church has been an outstanding spiritual and cultural symbol of Artsakh for almost two centuries.

Based on archival sources stored in the National Archives of Armenia and the Mother See of Holy Etchmiadzin, the author reveals the circumstances surrounding the construction of the church, its architectural and artistic features, and its significance in the religious and social life of the city. Particular attention is paid to the activities of the Tadevosyan Parochial School, founded by philanthropist Isaac Tadevosyan, which served as a center for Christian and national education in the late 19th and early 20th centuries.

The further fate of the church can be traced from its desecration and distortion during the Soviet period to its restoration and re-consecration after the liberation of Shushi in 1992. The narrative ends with the tragic fact of the complete destruction of the church by Azerbaijan in February 2024–as yet another act of systematic destruction of the Armenian cultural heritage in Artsakh.

Thus, the study not only revives the memory of a remarkable architectural and spiritual monument, but also bears witness to the enduring struggle for the preservation of the Armenian historical identity.